

**ՀՄՍՎ ԿՈՐԽՄԱՋՑԱՆ
Այլիսարագիտության դոկտոր**

ՄՇՈ ՃԱՌԵՆՏԻՐԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ

Մշո Շառընտիրը, կամ Տոնականը, պատկանում է ձեռագրական արվեստի եզակի բուշարձանների թվին: Հակապական չափերի այդ մատյանը ($70,5 \times 55,5$ ամ)¹ հայկական ամենամեծ ձեռագիրն է: Նրա ստեղծման վայրը ու ժամանակը (1202 թ., Երզնկայի Ավագ վանք) ճշտված են Ա. Մաթևոսյանի կողմից²: Այս մատյանը եզակի է թե՛ իր չափերով ու պարունակած նյութերի հարատությամբ³, թե՛ գեղագրության ու յուրօրինակ զարդարադրությամբ, թե՛ իր պատմությամբ, համարունչ իր ստեղծած ժողովրդի ճակատագրին⁴:

Սույն հոդվածը նվիրված է Մշո Շառընտիրի Ակարազարդումներին: Ձեռագիրն ունի չորս Տերունական մանրանկարներ և հարուստ հարդարանք՝ գլխազարդեր, լուսանցագրդեր, զարդարանքեր, որոնցից մի քանիսը հրատարակվել են⁵: Սակայն Մշո հսկայի ակարազարդումների մեծ մասը մնացել է չհրապարակված: Մի հոդվածում, անշուշտ, ան-

¹ Մաթևոսյան Ա., Երբ և որտեղ է գրվել Մշո Տոնական-Շառընտիրը, «Բաներ Մատենադարանի», Առ. 9, Երևան, 1969, էջ 137-163: Ձեռագիրի հիշատակարանը առաջին ամօամ հրատարակել է Գարեգին Կեղ. Հովսեփի յանը՝ «Յիշատակարանը ձեռագրաց», հ. 1, Ամֆիլիա, 1951, էջ 699-726: Տե՛ս նաև «Հայերնն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 27-33, 42-48:

² Ձեռագրի մեջ տեղ են գտնել տարբեր տիպի բնագործ՝ մերորդամմեր, ճառեր, եկեղեցական թղթեր, կարևոր պատմական երկերի տեքստեր, որոնց մի մասը պահպանվել է միայն այս ձեռագրում: Արտակարծ արժեքավոր են Սերեսի երկի հնագույն հատվածները, Արքարամ Եփեսոսի՝ Աստվածամորը մվիրված մերորդամմեր, Սամակ Գ Կարողիկոսի Ծառը և այլն (տես Ա. Մաթևոսյան, Երբ և որտեղ է գրվել Մշո Տոնական-Շառընտիրը):

³ Մշո Շառընտիրի պատմությունը քաջ հայտնի է: Այն գրվել է 1200-1202 թթ. ըմբացքում, Բաքերդի ույիս (կառավարիչ) Աստվածատուի պատվերով, հմուտ գեղագործ Վարդան Կարմենու ձեռքով: Ձեռագիր գործությունը առ էր պաքատվել, երբ սկզբեց Սլաստիայի տիրակալ, տաճիկ Ռուկա-Շե-Շիմի արշավանքը. ավերվեց Բաքերդ քաղաքը, պարուն Աստվածատուը սպանվեց, իսկ Մատունտիրն ըմկավ մի տաճիկ դատավորի ձեռքը: Մշո Առաքելոց վաճիքի միարամենք էին հանգամակություն հավաքել, փրկել ձեռագիրը գերությունից և տեղափոխել Մուշ քաղաքի Առաքելոց վանք, որ այն մնացել էր երկար տարիներ, ստամալով իր ամվանման՝ Մշո Շառընտիր: Երկրորդ ամօամ ձեռագիրը փրկվեց Մեծ եղեռնի օրերից՝ 1915 թ.: Միայն այս, ավելի յորդին օգտագործելու նպատակով, ձեռագիրը բաժանվել էր երկու մասի: Մի մասը գտնվել և Թիֆլիս էր բնրվել ուսական բանակի մի պայման ձեռքով, իսկ երկրորդը փրկվեց երկու հայ գաղաքական կամացը, որոնք մեծ հծվարությամբ հասցրին մատյանը Ա. Էջմիածնի: Այժմ Մշո հսկան հանգրվանում է Մաշտոցի անվան Մատենադարանում կրելով 7729 համարը:

⁴ Л. Դյурново, Древнеармянская миниатюра, Ереван, 1952, того же автора: Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, того же автора: Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, того же автора, Орнаменты армянских рукописей, Ереван, 1978. S. Der Nersessian, Manuscrits arménian illustres des 12-e, 13-e et 14-e siecles, Paris, 1936. S. Der Nersessian, L'Art Armenien, Paris, 1977. Armenian Miniatures of the 13th and 14th centuries, by E. Korkmazian, I. Drampian, G. Hakopian, Leningrad, 1984.

Բնարին է Աերկայացմել ձեռագրի ամբողջ մանրամկարչական զյութը, դա ապագայի գործ է: Առաջմ անդրադառնամք միայն այդ զյութի ընդհանուր Աերկայացման ու գնահատմանը:

Շառընտրի Ակարազարդմանը մասնակցել են, ըստ երևույթին, երկու Ակարիչներ, որոնցից մեկի անունը հայտնի է՝ Ստեփաննոս: Նրա վրձնին են պատկանում Տերումական Ակարները, տիտղոսաթերթը և մի շարք լուսանցազարդեր: Ձեռագրի Տերումական Ակարները Աերկայացման են պատկերագրական այնպիսի տարրերակներ, որոնք կապված են Վաղ քրիստոնեական արվեստի ավանդույթների հետ և որոնց ձևավորման ակունքների թվում էր նաև հայկական միջնադարյան արվեստը:

Ձեռագրի միայն երկու մանրամկարներն են, որ գրադանում են առանձին, ամբողջական էջեր (թթ. 1թ, 2ա): 1թ թերթի մանրամկարը բաժանված է երեք մասի, ընդ որում թերթի ձախ կողմը պատոված է: Վերևի պահպանված մասում, ձախից, որը համապատասխանում է էջի կենտրոնին, պատկերված է երկնային գարնին բազմած Քրիստոս՝ մեկ ձեռքով նա պահել է բացված գիրքը, որը կարդացվում է՝ «Ես եմ լոյս աշխարհի» (Հովհ. Ը 12), մյուսով օրինում է մեկին, այս հատվածից պահպանվել է Ամենակալին գիրք մատուցողի ձեռքի մի մասը:

Ա. Տեր-Ներսեսյանը ներթարում էր, որ այստեղ պատկերված է եղել Ավետման տեսարանը: Սակայն գրքով ձեռքի առկայությունը բացառում է այդ⁵: Հավանաբար, այստեղ Աերկայացված է եղել ձեռագրի պատվիրատում՝ Աստվածատուրը, որի մասին տեղենկություններ են պահպանվել ձեռագրի հիշատակագրություններում. «Չտացող սուրբ կտակին զպատուական պատրոնն զԱստուածատուր և գրարի ծնաւդս նորա յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ամէն: Եւ գծագիր Վարդան և զճնաւդս իմ, և Աստուած զՃեզ յիշեսցէ, ամէն»⁶:

Քրիստոսից աջ, երիզված հասարակ շրջանակով, Աերկայացված է «Մկրտության» տեսարանը: Հորինվածքի առանձին մանրամասներ խոսում են այն մասին, որ այստեղ կիրառված է հնագույն ավանդույթների հետ կապված մի տարրերակ: Այսպէս, Հովհաննեսի հագին ոչ թե քորձն է, որն ավելի էր ընդունված, այլ Աերքնազգեստ (իսիտու) և վերնազգեստ (հիմատիոս), ինչը բնորոշ էր ավելի վաղ ժամանակաշրջանի հուշարձաններին: Հազվադեպ է նաև խորքում պատկերված շնչքը, որը մատնանշում է նույնական վաղ շրջանի տարրերակի օգտագործման մասին՝ արտացոլելով տվյալ թեմայի Ակարագրությունն ըստ Հովհաննու Ավետուարամի: «Այս պատահեց Բեթաբրիայում, Հորդանանի մյուս կողմում, ուր և Հովհաննեսն էր և մկրտում էր» (Հովհ. Ա. 28): Խորքում պատկերված շնչքը մատնանշում է Բեթաբրիա քաղաքը: Սույն տեսարանի նման տարրերակը հանդիպում է վաղ քրիստոնեական մի շարք հուշարձաններում (օրինակ, 6-րդ դ. Մաքսիմիանոսի հայտնի փողոսկրյա գամի բարձրաքանակներում)⁷:

Մշտ Տնականի Ակարագրվող մանրամկարում մկրտվող Քրիստոսի ոտքերի տակ պատկերված է տապալված վիշապը, մի հանգամանք, որի մասին արդեն խոսվել է տար-

⁵ S. Der Nersessian, L'Art Armenien, p. 211.

⁶ ԺԳ դարի հայերնեմ ձեռագրերի հիշատակարամներ, էջ 28:

⁷ G. Schiller, Iconography of Christian Art, London, v. 1, 1971, pl. 361.

բեր ուսումնաակիրություններում⁸: Նման տարբերակը ձևավորվել էր եկեղեցական օրիներգության ազդեցությամբ: Այսպես, Ծարականցում, Աստվածաբայտնությանը նկիրված 8-րդ կանոնում, ասված է: «Հզգուի վիշապին Փրկիչն շախչախնաց ի Ցորդանան, ի գետն և հճեան իշխանութեամբ զամենեսեան ապրեցոյց»:

Այս կանոնի հիմքում ՀԳ սաղմոսի 14-րդ տաճ խոսքերն են: «Դու հաստատեցեր զօրութեամբ քով գծով, որ խորտակեցեր զգուի վիշապաց ի վերայ շուրց: Դու փշոնցեր զգուի վիշապին, և ետոր զնա Կերակոր գօրացն հնդկաց: Սակայն նման պատկերի ի հայու գալը նշաված տեսարանում կապված է նաև պարականն գրականության մի դրվագի հետ, համաձայն որի վիշապը հանդես է գալիս ոչ միայն որպես առաջին մարդկանց գայթակղիչ, այլև որպես Շնագ սատանա, որը երկրորդ անգամ է նրանց խարում, եթե Ադամն ու Եվան գիշերով Վտարվում են դրախտից: Այդ ժամանակ սատանան կրկին երևում է նրանց՝ ասելով, որ ընդմիշտ կմնան խավարի մեջ, եթե չխոստանան ծառայել իրեն⁹:

Այդ տարբերակն առավել հայտնի է հայկական պարականն գրականությունից, և երկի դա է պատճառը, որ հատկապես հայկական արվեստում «Մշրտության» տեսարանում, սովորաբար, առկա է տապալված վիշապի պատկերը: Մշնչելով քրիստոնյա մյուս ժողովուրդների արվեստում տվյալ տեսարանում Հորդանան գետում պատկերվում է ավելի հաճախ կամ խաչը պատվանդանի վրա (ի ձան քրիստոնեության հաստատման), կամ տարբեր անձնավորումներ, կապված հին հավատալիքների հետ (Հորդանան գետի մեջ պատկերվում են երեւմն մեկ կամ երկու կերպարներ՝ գետի մարդնավորումը, կամ չըի և երկրի աստվածություններ, երբեմն գրանք մեկնաբանվում են իրեն մարվան ու մեղքի խորհրդանշներ և այլն)¹⁰:

Նկարագրվող էշի մերքի մատում ներկայացված է Մննդյան տեսարանը: Աստվածամայրը և մանուկը գտնվում են քարայրում՝ շրջապատված հրեշտակներով և հովիվներով: Լողացման տեսարանից պահպանվել են միայն մանուկ Հիսուսի գոլովը և սպասավորող կնոջ պատկերի մի մասը: Հորինվածքի ձախ կողմում (որը չի պահպանվել) հավանաբար պատկերված են եղել Հովսեփը և մոգերը, որոնցից միայն մեկի գլխի թագն է երևում:

Այստեղ ևս տեսնում ենք տվյալ թեմայի հնագույն տարբերակներից մեկը՝ «Մննդյան» տեսարանում հատած Աստվածամոր կեցվածքը կապված է նրա անցավագին ծննդաբերության խորհրդի հետ: Տվյալ պատկերագրական տարբերակի հնագույն օրինակները հանդիպում են դեռևս 4-5-րդ, դդ. դամբարանների քանդակազարդերում, ինչպես և ավելի ուշ՝ 9-11-րդ, դդ. բյուզանդական և Կապաղովկյան արվեստում: Հայկական մանրանկարչության մեջ համան պատկերագրական օրինակներն ի հայտ են գալիս, ինմանականում, 11-րդ դարի մատյաններում, ինչպես օրինակ՝ Մելիտենայի 1057 թ. Ավետարանում: Մննդյան տեսարանի այդպիսի հորինվածքը երբեմն հանդիպում է և ավելի ուշ, 12-13-րդ

⁸ О. Подобедова, К вопросу об источниках иконографии средневековой книжной иллюстрации, "Второй международный симпозиум по армянскому искусству", сборник докладов, Ереван, 1981, кн. 1, с. 73-85. Հ. Քյուելամ, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ա. Էջմիածին, 1995, էջ 21:


⁹ Թանգարան հին և նոր դպրութեամց, Ա., Ամկանն գիրք Հիմ Կուտակրանց, Վեմեսիկ, 1896, էջ 312:

¹⁰ Գ. Չիլեկ, Աշվ. աշխ., էջ 137: Հ. Քյուելամ, Աշվ. աշխ., էջ 21-22:

դու հուշարձամներում, ինչպես հայկական, այնպես էլ աստրական մանրամկարներում ու վրացական որմնամկարներում (օրինակ՝ Տիմոտեսուրամի 1205-1215 թթ. և աղջոյում)¹¹:

Մշտ Ծառընտիրի չորրորդ Տերունական մկարը գտնվում է 325թ թերթում և զբաղեցնում էշի միայն 1/3 մասը (նկ. 1):

Այստեղ պատկերված է «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ»: Հորինվածքը բավական լակոնիկ է: Քրիստոսին նետուում են միայն երկու աշակերտներ: Նրանց դիմավորում են երկու տղամարդ (ծերումի և միջամասակ), մի կին, որը մարմնավորում է «դուստր Սիովմի» կերպարը¹², և չորս երիտասարդներ, որոնցից երկուաը եկողմների առջև, գետնի վրա, փոռում են իրենց հագուստները, իսկ մնացած երկուաը ծառից:



Նկար 1

ճյուղերն են պոկում: Այստեղ նետաքրքիր է Երուսաղեմ քաղաքի պարիսպների ձևն ու նրանց կենտրոնային երևացող մի բոլորաշենք (ոստոնիա)՝ դա քաղաքի պատկերման հիմագույն ձևերից է, որը շատ ընդունված էր Վաղ քրիստոնեական արվեստի գործերում¹³:

Մշտ Ծառընտիրի Տերունական մկարները առանձնանում են ոճական որոշակի պայմանականությամբ ու հարթապահանային մշակմամբ, ինչը շատ բնորոշ է միջնադարյան արվեստին առհասարակ, և պոպվել ցայտուն դրսորվել է արևելա-քրիստոնեական ու հայկական հուշարձամներում: Մաղկող Ստեփանոսի հորինվածքների կանոնիկ կառուցվածքը, ինչպես նաև բարդ ճարտարապետական շինույթումների ճիշտ վերարտադրությունը վկայում են լավ ճախօրինակի օգտագործման մասին: Պետք է նշել նաև, որ մկարչի կերտած կերպարներն առանձնանում են արտահայտչականությամբ: Հատկապես հաջողված է «Ծննդյան» տեսարանում Աստվածամոր պատկերը՝ խոշոր, գեղեցիկ և տխուր աչքերով:

Սույն ձեռագրի մանրամկարների ոճական առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է տարբերել Տերունական մկարների և օրնամենտալ հարդարանքի կատարման եղանակները: Այստեղ կարելի է մկատել մի նետաքրքիր երևույթ, որը շատ բնորոշ է մի շարք հայկական մկարազարդ ձեռագրերին՝ մարդկային կերպարները, երբեմն և ճարտարապետական կառուցմերը պատկերվում են կարծես մի փոքր կաշկանդված գծագրությամբ, ասկայն ինչ վերաբերում է զարդամկարներին, զրամք կատարված են ավելի մեծ վարպետությամբ: Անգամ բավական բարդ օրնամենտալ ձևերի կառուցվածքը առանձ-

11. Е. Привалова, Рисунки Тимотесубани, Тбилиси, 1980, с. 55. Т. Измайлова, ук. соч., там же.

12. Հովհաննես Ավետարանում ասված է. «Մի երկնչիր, դուստր Սիովմի, ամաւասիկ թագաւոր քո գայ մստեալ ի վերայ յաւանակի իշոյ» (Յովհ. ԺԲ 15):

13. K. Weitzmann, Late Antique and early Christian Book illumination, London, 1977, pl. 24.

մանում է արտակարգ ճշգրտությամբ, իսկ կոնտուրմերը ընդգծվում են վատահ, ճկում ու պլաստիկ գծերով:

Այս երևոյթը կարելի է բացատրել օրնամենտալ արվեստի ավելի հիմ ու հաստատուն ավանդույթամերի առկայությամբ: Այս անշուշտ մեծ զարգացում է ապրել հեռևու հեթանոսական ժամանակներում: Հայտնի իրողություն է, որ երբ ընդունվեց քրիստոնեությունը, առաջին եկեղեցիները կառուցվում էին կործանված մերժանների տեղում, ըստ որում օգտագործվում էին այդ հիմ շինությունների քարերը, հատկապես խնամքով վերաբերվելով նրանց քանդակագրությանը: Իսկ որ այդ մերժանները զարդարված էին քանդակագրով, հայտնի է մեր պատմիչների վկայություններից:

Մշտ ժառընտիրը պատկանում է մանրանկարչական արվեստի այն հուշարձանների թվին, որոնք արժեվորվուն են ամենից շատ իրենց օրնամենտալ հարդարամքի ճնշությամբ ու յուրահաստկությամբ: Ձեռագրի դեկորատիվ ձևավորումը պարունակում է զարդաների բազմազան ու բազմաթիվ տարրեր՝ բուսական ու երկրաչափական հարուստ օրնամենտիկա, որի մեջ միահյուսված են տարրեր կենդանիների ու թռչունների ինչպես իրական, այնպես էլ երևակայական պատկերներ, որոնց սկզբնական ձևերն ու իմաստը միշտ չեն, որ հնարավոր է պարզաբանել: Ակնհայտ է, որ նկարիչը մետուստ է այստեղ իրեն քաջ ծանություններին, որոնք կապված են տեղի ժողովրդական արվեստի հնագույն պատկերացումների մեջ, և որոնց ակունքները գալիս են առավել վաղ շրջանից: Տարբեր ժամանակներում նրանք ենթարկվել են փոփոխությունների՝ վերահիմաստավորվելով համաձայն տվյալ դարաշրջանի պատկերացումների ու գաղափարախոսության¹⁴:

Եղական մշակութի ավանդույթները ժառանգել են նաև արևելյան նշանակապաշտության (սիմվոլիզմի) սկզբունքները, որոնք ձևավորվել էին նույնական հնագույն պատկերացումների հիման վրա՝ կապված տոտեմական հասկացությունների մեջ: Ձեռագրի լուսանցքներում տեղ են գտնել նաև չարի ու բարու պայքարի, բնության պաշտամունքի (պանթեիզմի), դիցարանության արտացոլումների, ինչպես նաև պարզապես բուսական ու կենդանական աշխարհի տարրեր վերարտադրություններ:

Անցնելով դարերի միջով, այդ բազով, տարբեր ակունքներ ունեցող պատկերները, վերածվելով զարդաների, մերկապանում են հաճախ վերացական, ոճավորված ձևերի տեսքով:

Զարդարվեստում անցումը կոնկրետ ձևերից դեպի նրանց վերացական և ոճավորված տարրերակների՝ օրինաչափ մի պրոցես է, պայմանավորված այդ ձևերի ընթանրացված և ավելի բնորոշ պատկերներ ատենածողությունում: «Առարկայի վերափոխումը խորհրդաշամի, գաղափարական առաջացել էր որոշակի միտումների հիման վրա՝ պատկերելու ոչ թե հրա արտաքին տեսքը, որն այնքան հմտորեն կատարում էին անտիկ վարպետները, այլ նրա էռոֆյունը, ինչը հասկանալի էր միայն հոգևոր տեսողության համար»:

Այստեղից էլ առաջացել էր առարկայի պայմանական, ընթանրացված բնութագրման եղանակը, կերպարների համապարփակ ըմբոնումը, դեպքերը արտաժամանակ մերկա-

¹⁴ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955 թ.: Այդ կապակցությամբ հետաքրքիր հետազոտություն է կատարել Հ. Հայրապետյանը, տե՛ս Հուշկապարիկի գաղափարը հայ միջնադարյան հավատալիքներում, «Վրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, Առ.7, էջ 53-61:

յացնելու միտումը, որպես հավերժ ու անփոփոխ իրադարձություններ: Դրանցով պայմանավորված են նաև լուսաստվերային մշակման փոխարեն ճակատային և սիմետրիկ բորինվածքների հաստատումը, որոնք մնում են ընդունված կանոնների շրջանակներում»¹⁵:

Հնագույն պատկերացումների, աշխարհներակալման արգասիք լինելով հանդերձ, զարդարվեստը հանդիսանում է նաև մարդու ստեղծագործական աշխատանքի այն բնագավառը, որտեղ մարմնավորվել են տվյալ ժողովրդի գեղագիտական ճաշակն ու հասկացությունները, որոնք թույլ են տալիս տարբերել ոչ միայն առանձին ժողովուրդների ստեղծագործությունները, այլև առանձնացնել ու բնութագրել գեղարվեստական դպրոցները, ճշտել գործերի ստեղծման վայրն ու ժամանակը:

Մշտ Շառընտիրի օրնամենտալ հարդարանքը շատ բնորոշ է Բարձր Հայքի 12-13-րդ դարերի մեջ: Նրանցում գերիշխող զարդերի թվին պատկանում են սրածայր տերևների, արմավեմիկների, գալարազարդերի բազմաթիվ տարբերակներ, որոնց ավելի պարզագույն տեսակները հայտնի են Մերձավոր Արևելյան հնագույն ժամանակներից: Հայկական հուշարձաններում, թե՛ մանրանկարներում, թե՛ բարձրաքանդակներում, դրանք հաճախ ներկայանում են կենդանական աշխարհի, իրական կամ երևակայական կերպարների հետ միախոսված: Մշտ Տոնականի զարդաներին հատուկ են նաև ուրույն ոճական առանձնահատկություններ՝ գունային հագեցվածությունն ու տարբեր երանգների հակադրությունները:


Զեռագրի Ակարազարդումներն արվել են, ինչպես Աշեցինք, երկու Ակարիչների ձեռքով: Ստեփանոսը, որի անունը կարդացվում է տիտղոսաթերթի վրա, բացի տերունական Ակարներից (Արանց մասին արդեն խոսվել է), կատարել է նաև ձեռագրի դեկորատիվ հարդարանքի մի մասը: Նկարիչը օգտագործում է, հիմնականում, նույն հյուսվածքային զարդաների բազում տարբերակները: Այդպիսի զարդերով հարդարել է նաև հսկայական տիտղոսաթերթը: Վերջինն իրենից ներկայացնում է խորանատիպ մի հորինվածք, որը զարդարված է հիմնականում բուսական օրնամենտներով:

Գլխազարդի կենտրոնում պատկերված է մեծ վարդյակ, կողքերից կիսաշրջանակներով, որոնց մեջ տեղադրված են հերալդիկ կեցվածքներով երկուական կենդանակերպեր, մի կողմից աղյուծներ, մյուս կողմից՝ սփինքներ: Գլխազարդը հենված է չորս պուների վրա, ընդ որում պուներից մեկը համելիսանում է մեծ «Ի» տառի առանցքը: Աչ կողքից, Եջի ամբողջ երկայնքով, Ակարված է մեծ խաչը: Բարդ հյուսվածքներից և բուսական զարդերից են կազմված ձեռագրի մի շարք լուսանցազարդեր, որոնց կատարումը նույնպես պատկանում է Ստեփանոսին:

Առավել մեծ խումբ են կազմում այն լուսանցազարդերը, որոնք կատարված են այլ ոճով, մի որիշ վարպետի ձեռքով, որն աշխատում է ավելի համարձակ, և որի ներկայական առանձնանում է վառ գովմերի հետաքրքիր համադրություններով. պայտես, նարմաշագույնները նաև համադրում է մուգ դարչնագույն տոներով, բաց երկնագույնը՝ մուգ կապույտը: Նրա ֆանտաստիկ զարդաները վերածվում են երեսն երևական կենդանապատկերների, վիշապների, բացված երախներով, կարծես շարժվող ու ֆշտացող, եզրա-

¹⁵ Л. Лелеков, Искусство древней Руси в его связях с Востоком, в кн. "Древнерусское искусство", Москва, 1975, с. 56.

գծված սահուն ու պլաստիկ գծերով։ Տերեմն զարդերի մեջ միահյուսվում են այլ կենդանիներ, թռչուններ իրական կամ երևայական (նկ. 2, 3)։




Նկար 2

Վառ, գեղեցիկ պտուղներով։ Հանդիպում են նաև բույսեր՝ ներկայացված ամրողությամբ, արմատներով համերձ։ Այդ համգամանքը առիթ հանդիսացավ են-թադրելու, որ ձեռագրի մախօրինակների շարքում եղել են նաև մատյաններ դեղաբույսերի մասին։ Նման կարծիք է հայտնել Սիրարքի Տեր-Ներսեսյանը, որը մատնանշել է, որ Մշո Ծաղընտիրի լուսանցազարդերի նախատիպերը կապված էին մի որևէ բժշկարանի Ակարազարդումների հետ, որոնց հնագույն օրինակը հանդիսանում է Դիկոսկորիդանի երկը¹⁶։ Սակայն այդ ենթադրությունը կարող է համապատասխանել Մշո Ծաղընտիրի լուսանցազարդերից միայն մի քանիսին, քանի որ Արանց մեծ մասը, ինչպես նշվեց, ոճավորված կամ ֆանտաստիկ մոտիվներով պատկերներ են, որոնց իմաստավին բազմարժության արդեն անդադարձել ենք։

Ֆանտաստիկ, երևակայական կենդանապատկերների առկայությունը հայկական արվեստում կապված է ոչ միայն իրանական արվեստի հետ։ Դա մի երևույթ էր, որը միշտ ադարում բնորոշ էր տարրեր ժողովուրդների արվեստին¹⁷։ Լինելով հնագույն հավատալիքների վերապրուկներ, այդ պատկերները նշված ժամանակաշրջանում ընկալվում էին որպես չար ուժերի խորհրդանշեր։

Այդ նկարչի կատարած օրնամենտներն իրենց զարդերի բազմազանությամբ, վառ գույների հետաքրքիր համադրություններով արտակարգ տպավորիչ են ու ձեռագրին հաղորդում են յուրաքանչուկ տղմականություն, համարում են արա անվանմանը։ Տնօւագրի լուսանցքներում, բացի երևակայական պատկերներից, հանդիպում են նաև բավական ուշադրություն պատկերված թև՝ կենդանիներ, թև՝ բույսեր։ Տպավորիչ են թութակների, բաղիկների, եղջիկների և այլ կենդանիների պատկերները, որոնց կատարումը մատնանշում է նկարչի սուր դիտունակության մասին։ Բովսներից նամաշվում են թուզը, խաղողը, մեխակը և այլն։ Երեմն տրվում է բույսի ամրողական պատկերը, օրինակ՝ նուան ծառն իր



Նկար 3


¹⁶ S. Der Nersessian, L'Art Armenien, p. 214.

¹⁷ Ա. Մնացականյան, Դիցարանական եղջերում միջնադարյան հայ արվեստում, «Բանքեր Մատեմադարման», մո. 12, Երևան, 1977, էջ 7-48.

Հետաքրքիր է, որ Ազգաթանգեղուս, Ակարագրելով մերյամմերի կործանումը Գրիգոր Լուսավորչի և Տրդադ թագավորի կողմից, ամեն անգամ կրկնում է, որ այն տեղերից վտարում էին դևերին (սատանաներին), որոնք վաղ ժամանակների քրիստոնյաների կողմից նոյնացվում էին հեթանոսական կուռքերի, սուս աստվածների հետ, վտարված և տապալված նոր հավատքի՝ քրիստոնեության կողմից:

Քրիստոնեական արվեստում զրանք վերահմատավորվում էին համաձայն նոր գաղափարախոսությամբ: Այդ կապակցությամբ Աս. Մնացականյանը գոել է, որ համաձայն միջնադարյան մտածելակերպի, մեթանոսական ուժերը և գաղափարները կարելի էր համարել ոչ միայն պարտված, այլև նվաճված ու ծառայած քրիստոնեական գաղափարներին¹⁸: Այդ միտումն արտահայտվել էր մին մեկնարանություններում, որոնք ուղղված էին աղերսներ և շաղկապվածություններ գտնել Հին և Նոր Կտակարանների միջև, ու հնարավորություններ էին ընձեռում տեղական հին հավատալիքների ու պատկերացումների նոր մեկնությունների համար:


Մշտ Տոնակամի լուսանցագարերը տեղադրված են, ինչպես ընդունված էր, տեքստերի գլուխների ու առանձին հատվածների սկզբներում, իսկ մեծ բաժինները օժտված են գլխազարդերով: Լուսանցագարերում առավել հաճախ կրկնվում են օրնամենտալ ձևեր՝ կազմված կիսաարմավենիկներից, սրածայր տերևներից ու գալարածն ճյուղերից, Աերկայացված բազմապիսի տարրերակներով: Այդ զարդերից աստիճանաբար ձևավորվում է այն դասական լուսանցագարդի ձևը (կամ լուսանցային նշան), որը դառնում է հայկական մանրամկարչության համար բնորոշիչ տարրերից մեկը: Այդ լուսանցային նշանը գույն օրինակները համեմ են մեզ Արևմտյան Հայաստանի հուշարձաններից և, մասնավորապես, Բարձր Հայքի ձեռագրատներում ստեղծված մատյաններից: Պահպանված նյութը թույլ է տալիս բացահայտել այդ նշանների զարգացման ընդհանուր ընթացքը՝ ամենապարզ ձևերից դեպի աստիճանաբար բարդացվող տարրերակների (Ակ. 4, 5):



Նկար 4

¹⁸ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955: Նույնի. «Աղթամարի տաճարի քանդակագորդերի վերծանության նոր փորձ» (Համրապետական գիտական 5-րդ նատաշրջան, Ավիրված հայ մշակույթի արվեստի խմբի մեջին, գևուցումների թեզեր, Երևան, 1982, էջ 367):

Մշո Շառընտիրի արտակարգ մեծ չափերը պայմանավորեցին Արա հարդարանքի մունամենտալ բնույթը: Սակայն, չնայած մեծացված չափերին, ձեռագրի դեկորատիվ հարդարանքը չի թողնում կոպտացված ու սխմատիկ զարդերի տպագրություն: Կատարված պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, Արանք առանձնանում են գծագրերի կատարելությամբ ու հատակությամբ, զարդերի տարրերակաների բազմազանությամբ, ինչպես և գունային էֆեկտների հարստությամբ: Մատյանը գրվել է բարձրորակ մագաղաթի վրա, թանաքն ու Անրեկերը չեն գունաթափվել ու վնասվել ձեռագրի ստեղծման ժամանակից անցած ուղիղ ուղև հարյուր տարիների ընթացքում:



Նկար 5

Օրնամենտալ հարդարանքի առանձնահատկություններով Մշո Տոնականի հետ համեմատում են 13-րդ դ. մի շարք ձեռագրեր¹⁹, որոնք գրվել և նկարազարդվել են Երզմկայի Ավագ վանքում: Այդ ձեռագրերը, հիմնականում, մեծ չափերի մատյաններ են, գրված բարձրորակ մագաղաթի վրա, դասական գեղեցիկ երկաթագրով, հարդարված օրնամենտալ զարդերով, որոշ չափով համահնչուն Մշո Շառընտիրի Անկարազարդումներին: Հանդիսանալով նույն գրչկենտրոնի արգասիք, Արանք վկայում են այստեղ ձևավորված և մեծ զարգացման հասած գեղագրական ու մանրանկարչական դպրոցի մասին, որի գլուխգործոցներից մեկը հանդիսանում է Մշո Շառընտիրը²⁰:

¹⁹ Լոնդոնի Ազգային Գրադարանում պահվող 1200 թ. Ավետարան (Առ. 13654), Վիեմանի Մխիթարյան Մատենադարանի 12-րդ դ. ձեռագրի պատահիկներ (Առ. 456) և 1222 թ. Ավետարան (Առ. 218), Մաշտոցի անվ. Մատենադարանի 1201 թ. Ավետարանը (Առ. 10359): Նշված առաջին ձեռագրի մամրանկարներն ուսումնասիրվել են 8. Իզմայլովայի կողմից. տե՛ս Խարբերդский образец в заглавных листах рукописи Авана ванка 1200 года, “Историко-филологический журнал”, 1977, Ա. 3, ս. 206-220. Վիեմանի ձեռագրերն ուսումնասիրվել են Հելմուտ և Հայրեն Բուշհայմերի կողմից. Heide und Helmut Buschhausen, Die illuminierten armenischen Handschriften der Mekhitaristen-Congregation in Wien, Wien, 1976.

²⁰ Երզմկայի Ավագ վանքի ձեռագրական արվեստի մասին ծրագրել էր ուսումնասիրություն կատարել Գարեգին Հովսեփյանը, ինչի մասին գրել էր իր Բողվածներից մեկում, տե՛ս Արա «Համառոտ գեկուցում հայ մամրանկարչութեամ Առիրուած մեր աշխատանքի մասին», ԱԱթ., Առ. 12, Թեյրութ, 1948, էջ 618-625: